Հետազոտական աշխատանք

ԹԵՄԱ՝ Գոյականական անդամի լրացումների ուսուցման առաձնահատկությունները

ՈՒՍՈՒՑԻՉ՝ Լիանա Օհանյան

ԽՈՒՄԲ՝ Հայոց լեզու և գրականություն

ԽՄԲԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Լիլիթ Մարկոսյան

Բովանդակություն

Ներածություն----------2

Գոյականական անդամի լրացումների ուսուցման առաձնահատկությունները----------3

Որոշիչ----------5

Հատկացուցիչ----------8

Հատկացուցիչի կետադրությունը----------9

Բացահայտիչ----------10

Բուն բացահայտիչ----------11

Մասնական բացահայտիչ----------13

Գոյականական անդամի լրացումների ուսուցումը---15

Եզրակացություն----------17

Օգտագործված գրականության ցանկ----------18

Ներածություն

Ժամանակակից դպրոցում դասապրոցեսն ավելի հետաքրքիր և ինտերակտիվ կազմակերպելու համար հաճախ անհրաժեշտություն է առաջանում դուրս գալ կաղապարներից և նյութի մատուցման նոր ձևեր և մոտեցումներ գտնել: Հենց այս անհրաժեշտությունից է բխում սույն աշխատանքի թեմայի արդիականությունը: Շարահյուսության անբաժանելի մասն է կազմում նախադասության անդամների ուսումնասիրությունը: Միջին դպրոցում հայոց լեզվի ուսուցման գործընթացում կարևոր և առանձնահատուկ տեղ է գրավում «Գոյական անդամի լրացման ուսուցման առանձնահատկությունները» թեմայի ուսուցումը: Բացի ենթակայից և ստորոգյալից, նախադասության մյուս անդամները լրացումներ են կամ երկրորդական անդամներ: Երկրորդական անդամները իրենց հերթին ունեն լրացումներ, դրանք արդեն լրացման լրացումներ են:Նախադասության մեջ գոյականական անդամը ունենում է այնպիսի լրացումներ, որոնք ցույց են տալիս գոյականով արտահայտված անդամի որևէ հատկանիշ, նրա պատկանելությունը և ով, ինչ լինելը: Այդ լրացումներն են ՝ որոշիչը, հատկացուցիչը, բացահայտիչը:

Սույն աշխատանքի մեջ ներկայացված են գոյական անդամի լրացումների ուսուցման առանձնահատկությունները: Լրացումների ուսուցումը բարդ և դժվարին գործընթաց է, որը հիմնվում է հայոց լեզվի մյուս բաժինների իմացության վրա: Եվ եթե աշակերտը տարբերակի գոյականական անդամի լրացումները, ապա հեշտությամբ կտարբերակի նաև բայական անդամի լրացումները:

Իմ նպատակն է ՝ ներկայացնել,թե որն է գոյական անդամը, ինչ լրացումներ ունի, քանի տեակի է լինում,նախադասությունների մեջ ինչպես է հանդես գալիս,ինչ կետադրություն ունի:

Հետազոտական խնդիրներն են՝

Բացահայտել գոյական անդամի լրացումների ուսուցման առանձնահատկությունները;

Պարզաբանել նախադասության գլխավոր և երկրորդական անդամները

Վերլուծել գոյական անդամի լրացումներ հասկացությունը

Ներկայացնել գոյական անդամի լրացումները՝ որոշիչ, հատկացուցիչ, բացահայտիչ Ներկայացնել որոշչի, հատկացուցչի, բացահայտչի կիրառությունը նախադասության մեջ, կետադրությունը:

Գոյական անդամի լրացումների ուսուցման առաձնահատկությունները

Ըստ կազմության նախադասությունները լինում են երկու տեսակի՝ պարզ և բարդ: Պարզ նախադասությունները ևս լինում են երկու տեսակ՝ համառոտ և ընդարձակ: **Միայն ենթակայից և ստորոգյալից կամ միայն ստորոգյալից կազմված նախադասությունը կոչվում է պարզ համառոտ նախադասություն: Ենթական և ստորոգյալը նախադասության գլխավոր անդամներն են:**

Օրինակ՝ Մենք չենք լսում: Օրը վերջացավ: Մթնեց: Լուսանում է:

Պարզ ընդարձակ կոչվում է այն նախադասությունը, որտեղ գլխավոր անդամների հետ առկա է առնվազն մեկ երկրորդական անդամ:

Օրինակներ՝ *Սուրենը պարտաճանաչ աշակերտ է: Անծայրածիր տիեզերքում հրթիռն անհայտացավ: Երկաթը տաք-տաք կծեծեն:*

Նախադասության երկրորդական անդամները բաժանվում են երկու խմբի՝ գոյականական և բայական: Ենթակայից ու ստորոգյալից բացի նախադասության կազմի մեջ մտնող մյուս բոլոր անդամները կոչվում են երկրորդական անդամներ:

Գոյականական անդամի լրացումներն են՝ որոշիչ,հատկացուցչ,բացահայտիչ:

Դրանք որպես կանոն լրացնում են կամ գոյականներին՝ անկախ նրանից, թե գոյականները նախադասության ինչ անդամի պաշտոնով են հանդես գալիս, կամ բայերին՝ կրկին անկախ նրանից, թե բայերը նախադասության ինչ անդամի պաշտոնով են հանդես գալիս : Այստեղից էլ տարբերակվում են նախադասության երկրորդական անդամների երկու խումբ՝ գոյականի կամ գոյականական անդամի լրացումներ, որոնք են որոշիչը, հատկացուցիչն ու բացահայտիչը, և բայի կամ բայական անդամի լրացումներ, որոնք են խնդիրներն ու պարագաները:


Նախադասության անդամներ
գլխավոր
երկրորդական
ենթակա
ստորոգյալ
բայական և գոյականական


գոյականական անդամի լրացումներ
Որոշիչ
Հատկացուցիչ
Բացահայտիչ

1.1 Որոշիչ

Որոշիչը գոյականական անդամի այն լրացումն է, որը ցույց է տալիս առարկայի որակական և քանակական հատկանիշ։

*Օրինակ՝ **Լուսավոր** երազների գրկում ճախրում էին **սիրահարված** պատանու հոգու թևերը։*

Որոշիչը պատասխանում է ինչպիսի՞, ո՞ր, որքա՞ն հարցերին։ Որոշիչն արտահայտվում է հետևյալ ձևերով

1. գոյականով

- ուղղական հոլովով

*Օրինակ՝ **Բժիշկ** Սարգսյանն ավարտեց վիրահատությունը։*

- սեռական հոլովով

*Օրինակ՝ Արամի **ձեռքի** ժամացույցը մեխանիկական է։*

ածականով

*Օրինակ՝ Աղջկա **հրե** աչքերը խելքահան էին արել տղային։*

դերանունով

*Օրինակ՝ **Այս** հոդվածը շատերին կստիպի խոսել։*

հարակատար և ենթակայական դերբայներով

*Օրինակ՝ **Կարդացած** գրքերը դրել էր արկղում։*

*Ինձ **ժպտացող** աղջիկը դեռ դպրոցում է սովորում։*

թվականով

*Օրինակ՝ **Հինգ** աշակերտ մտավ դասարան։*

մակբայով

*Օրինակ՝ **Արագ** քայլքը կարող է վնասակար լինել։*

Դերանվամբ արտահայտված որոշիչ հասկանալի է, որ դերանուններից որոշչի պաշտոնով հանդես են գալիս հատկանշային իմաստ արտահայտող դերանունները,այսինքն ածական դերանունները։ Ցուցական դերանուններից որոշչի պաշտոնով հանդես են գալիս *այս, այդ, այսքան, այդքան, այս չափ* և այլն։ Որոշյալ դերանուններից՝ *ամեն, ամեն մի, բոլոր, յուրաքանչյուր, ողջ, ամբողջ, համայն, ամենայն։* Անորոշ դերանուններից՝ *ինչոր, ինչ-ինչ, ուրիշ, այլ, այսինչ, այնինչ, որոշ, որևէ,* որոնք ցույց են տալիս առարկայի ոչ որոշակի հատկանիշ։ Հարցականներից՝ ո՞ր, ինչպիսի՞, ինչքա՞ն, որքա՞ն, քանի՞։

Ազատ և կայուն դարձվածքային բառակապակցություններով՝

<u>օրինակ՝ Ժայռերի բարձունքին կառչած արահետը առաջին ձյան հետ փակվում էր:</u>

Կապային կապակցությամբ

Օրինակ՝ Թանաքի պես թանձր ցավս է տարրալուծվում:



Որոշչի կետադրությունը՝ հետադաս որոշիչ: Հայերենում սովորաբար որոշիչը դրվում է որոշյալից առաջ.

Օրինակ՝ Ես իմ անուշ Հայաստանի արևահամ բառն եմ սիրում...

Նախադաս դիրքում որոշիչը չի տրոհվում:

Օրինակ՝ 1) Դաշտում մեզ էին ժպտում *կարմիր, սպիտակ, կապույտ ու դեղին* ծաղիկները:

2) Տուն մտավ *սև ու խոշոր* աչքերով այս տղան:

Գեղարվեստական խոսքում, սակայն, հատկապես բանաստեղծությունների մեջ որոշիչը դրվում է որոշյալից հետո: Եթե որոշիչը դրվում է որոշյալից հետո, կոչվում է հետադաս որոշիչ:

Օրինակ՝

1) Դաշտում մեզ էին ժպտում ծաղիկները՝ կարմիր, սպիտակ, կապույտ ու դեղին:

2) Տուն մտավ այս տղան՝ սև ու խոշոր աչքերով:

Հետադաս որոշիչը չի տրոհվում, եթե արտահայտված է մեկ բառով:

Օրինակ՝ Սիրում եմ մեր երկինքը մուգ, ջրերը ջինջ, լիճը լուսե:

Եթե հետադաս որոշիչը ծավալուն է, ապա որոշյալից անջատվում է բութով, իսկ նախադասության մյուս անդամներից՝ ստորակետով:

Հետադաս որոշիչը տրոհվում է բութով, եթե արտահայտված է՝

1. Բազմակի որոշիչներով, ինչպես՝ *Դա մի փոքրամարմին կին էր՝* ***տարօրինակ, ծեր, առողջությունից զրկված, անհրապույր տեսքով և շատախոս:***

2. Բառակապակցությամբ, ինչպես՝
Օր՝ *Ծառերը* ***(որոշյալ)*** *ճերմակ****(որոշիչ)*** *ծաղիկներով****(որոշիչ),*** *կարծես նորահարս լինեն:*

3. Դերբայական դարձվածով, ինչպես՝ *Հեռվում երևում էր Մասիսը՝ կապույտ շղարշ հագած:*

Տրոհվող որոշիչը լավ յուրացնել տալու համար պիտի նաև կատարվեն բազմազան վարժություններ՝ բանավոր և հատկապես գրավոր: Օրինակ՝ պետք է պահանջել, որ աշակերտները բերեն նախադաս որոշիչների օրինակներ՝ դարձնելով դրանք ետադաս, բացատրեն տարբերությունները, նշանակեն կետադրությունը: Անհրաժեշտ է կատարել նաև հակառակը. այսինքն՝ բերել տրոհվող որոշիչների օրինակներ, դրանք դարձնել նախադաս չտրոհվող որոշիչներ: Գրավոր վարժությունները կարելի է տալ հետևյալ կերպ. առանձին քարտերում նախօրոք գրել նախադաս որոշիչների օրինակներ և պահանջել, որ աշակերտները դրանք դարձնեն տրոհվող որոշիչներ՝ բացատրելով նրանց կետադրությունը:

Կարելի է հանձնարարել նաև նախադասություններ՝ կետադրել տրոհվող որոշիչները:

Երիտասարդն իր առջև տեսավ ծանոթ միջնաբերդը վերևից վար ծառաստանով շրջապատված և կանաչների մեջ կորած այգին ատամնավոր պարսպով և բուրգերով գոտևորված:

Քիչ հետո երևաց Ավագ կամ, ինչպես կոչում էին Վաղարշապատի դուռը զույգ աշտարակներով և բարձր բուրգերով, որոնց վրա ծածանվում էին պարսից դրոշներ բազմաթև արծվի զինանշանով:

Դեմ դիմաց կանգնած էր ծանոթ մի տղամարդ ծանոթ ժպիտով ժամանակի ճերմակ փոշուց սպիտակած մազերով, բայց երիտասարդական առուգ կեցվածքով ու վեհատեսիլ:

Մերթընդմերթ նավթահանքերից լսվում էին ինչ-որ խշշյուններ. դա դեպի ամբարները հոսող նավթի ձայնն էր միօրինակ ու տաղտկալի:

Բեկին մոտեցավ մելիք Թուրինջը գեղջկական հագուստով գրխաբաց ու շփոթված:

Հատկացուցիչ

Գոյականական անդամի այն լրացումը, որը ցույց է տալիս պատկանելություն, սերում, ծագում, վերաբերություն, կոչվում է **հատկացուցիչ**:

Հատկացուցիչը դրվում է սեռական հոլովով և պատասխանում է *ո՞ւմ, ինչի՞, ինչերի՞* հարցերին:

Հատկացուցիչ ունեցող անդամը կոչվում է **հատկացյալ**:

- **Մեր** *ճամփորդությունը* հիանալի անցավ:
- **Ճամփորդության** *մասնակիցները* գոհ էին:
- **Բակի** *տերևները* երեկ էինք մաքրել:

Մգեցված տառերով բառերը հատկացուցիչներն են, շեղատառ գրվածները՝ հատկացյալները:

Ուղիղ շարադասության դեպքում հատկացուցիչը միշտ դրվում է նախադաս: Երբեմն՝ հատկապես գեղարվեստական խոսքում, կիրառվում է հետադաս՝ շրջուն շարադասությամբ, ինչպես.

Մոտենում է, քո՛ւյր **իմ**, ա՜խ, իրիկունս միգամած.
Ես ի՞նչ անեմ, որ հոգիս չհեծկլտա կարոտից.
Ինչպե՞ս, ինչպե՞ս ընդունեմ կյանքիս բաժակը քամած,
Որ ձեռքերս չդողան, որ օրերս ներե՛ն ինձ:

Հատկացուցիչն արտահայտվում է.

- գոյականով, օրինակ՝ **հոր** բարկությունը, **արտիստի** ապրումները,
- դերանունով, օրինակ՝ **իմ** աչքերը, **մեր** լեզուն, **նրանց** նպատակները,
- գոյականաբար հանդես եկող ածականով, թվականով, անկախ դերբայներով, օրինակ՝ **կարմիրի** երանգը, **երեքի** կարծիքները, **զայրացողի** հայացքը, **աշխատածի** արդյունքը:

Եթե հատկացուցիչը եզակի առաջին կամ երկրորդ դեմքի անձնական դերանուն է, ապա հատկացուցչին կարող են փոխարինել *ս* և *դ* ստացական հոդերը, օրինակ՝ իմ գրքերը-գրքերս:

Անձնական դերանվան հոգնակի թվով արտահայտված հատկացուցչին փոխարինելիս *ս* և *դ* հոդերից առաջ միավանկ բառերը ևս ստանում են – *ներ* վերջավորություն, օրինակ՝ մեր խոսքերը-խոսքներս, ձեր մտքերը-մտքներդ:

Հատկացուցչի կետադրությունը

Հատկացուցիչը որևէ հատուկ կետադրություն չունի: Շարադասությամբ հատկացուցիչը նախորդում է հատկացյալին: Եթե հատկացուցչի և հատկացյալի միջև առկա է նախադասության այլ անդամ՝ գոյական կամ դերանուն պարունակող որոշիչ բառակապակցություն կամ դերբայական դարձված, ապա հատկացուցիչն այդ անդամից տրոհվում է բութով, հատկացուցիչը նրան չվերագրելու համար:

Աղջկա՝ աստղերով հիացող **հայացքը** լի էր սպասման հույսով:

Սովորողի՝ Փարիզում արված **լուսանկարները** տեղադրված էին բլոգում:

Դերանվանական բառակապակցության դեպքում հատկացուցիչը կարող է երբեմն չտրոհվել, օրինակ՝

Իմ նրան ուղղված **խոսքը** հուզեց բոլորին:



Շարադասությունը՝ ուղիղ և շրջուն: Ուղիղ շարադասության դեպքում հատկացուցիչը միշտ դրվում է նախադաս:

Օրինակ՝ *Ու բոլորի դեմքի վրա վա՛խ, սպասում*:(ՊՍ)

Գեղարվեստական խոսքում երբեմն հատկացուցիչը կիրառվում է հետադաս՝ շրջուն շարադասությամբ, ինչպես՝ քու՛յր իմ, ամոքի՛ր վշտերս թաքուն... Հատկացուցիչը միշտ դրվում է սեռական հոլովով, հատկացյալի հետ չի համաձայնում, կապվում է առդրությամբ: Հատկացուցիչ թեման,որպեսզի աշակերտը ավելի լավ ամրապնդի անհրաժեշտ է տալ նման առաջադրանքներ:

Ընդգծված բառերին ավելացրո՛ւ հատկացուցիչ լրացումներ, որոնք ցույց տան, թե դրանք (հատկացյալները) ո՛ւմ, կամ ինչի՛ն են պատկանում կամ վերաբերում:

- Ձկները լույսի պատճառով շատ խորն էին իջել:
- Սիրով կարդում էր բանաստեղծությունները:
- Երեկոն շատ խաղաղ էր:
- Խանութն արդեն երկար ժամանակ փակ էր:
- Հրամանները շատ արագ էին կատարվում:

Ընդգծված հատկացուցիչների և հատկացյալների կապը հստակ ցույց տալու համար կետադրիր:

- Առագաստանավի անցյալ դարում ապրած նավապետի գրառումներում մի հետաքրքիր փաստ կա:
- Վարելահողերի անտառներ հատելու միջոցով ընդարձակման հետ հաճախացան խորշակները, որոնք իսկական պատուհաս են հողագործության համար:
- Հողի սև մրրիկներից պաշտպանող բարեկամը անտառն է:
- Մթնոլորտը կեղտոտում են նաև անտառային հրդեհների արևի դեմքը ծածկող ծուխն ու հրաբխային մուրը:
- Անձրևների և հալոցքի ջրի լեռնային ապարներր մաշեցնող շիթերը քայքայում են նաև շատ հանքային աղեր:

Կետադրիր.

1. Արթուրի ներկաներին ուղղված ողջույնը աննկատ մնաց:
2. Բազեի որսորդի զարկից թուլացած մարմինն ընկավ լիճը:
3. Յուրաքանչյուրի ինձ ուղղված խոսքը խոցում էր սիրտս:
4. Առագաստանավի անցյալ դարում ապրած նավապետի գրառումներում մի հետաքրքիր փաստ կա:
5. Արեգակի ընդամենը մի քանի րոպե տևող խավարումը սարսափ առաջացրեց մարդկանց մեջ:

Բացահայտիչ

Բացահայտիչ, նախադասության երկրորդական անդամ կամ գոյականական անդամի լրացում է, որ ցույց է տալիս լրացյալի ով կամ ինչ լինելը: Բացահայտիչ ունեցող գերադաս անդամը կոչվում է *բացահայտյալ*: Բացահայտյալի ու բացահայտչի միջև եղած արտասանական դադարը բավականին ակնհայտ է և գրավոր խոսքում արտահայտվում է կետադրական նշանով (սովորաբար՝ բութով):

Բացահայտիչը լինում է երեք տեսակ՝ բուն բացահայտիչ, մասնական բացահայտիչ և մասնավորող-պարագայական բացահայտիչ: Բացահայտիչը պատասխանում է այն հարցին, ինչ հարց, որ տրվում է բացահայտյալին՝ ո՞վ, ու՞մ, ու՞մով, ի՞նչը, ինչի՞ց, ինչո՞վ, որտե՞ղ, ե՞րբ և այլն



Բուն բացահայտիչ

Բուն բացահայտիչը առարկայի ով կամ ինչ լինելը բացահայտում է ամբողջությամբ և պահանջում է նույն հարցը:

> *Աբու-Լալա Մահարին՝ հռչակավոր բանաստեղծը Բաղդադի, Տասնյակ տարիներ ապրեց խալիֆաների հոյակապ աշխարհում: (Ավ. Իսահակյան)*

Բուն բացահայտիչը բացահայտյալի հետ համաձայնում է թվով, դեմքով, հոլովով: Այն բացահայտյալից տրոհվում է բութով, նախադասության մյուս անդամներից՝ ստորակետով (ստորակետ չի դրվում, երբ բացահայտիչը դրված է սեռական հոլովով, բացահայտչին անմիջապես հաջորդում է կապ, հանգույց, օժանդակ բայ կամ *էլ* հավելականը):

Բուն բացահայտիչն ունի կայուն շարադասություն. այն միշտ դրվում է բացահայտյալից հետո: Հայերենում սա միակ դեպքն է, երբ նախադասության անդամի շարադասությունը փոխելիս փոխվում է նաև նրա քերականական պաշտոնը:

Օրինակ՝

Ամեն ինչ՝ ***երգ, հրթիռ, ատոմ*** *ստեղծելու մասին գիտեմ, հող ստեղծելու մասին՝ ոչ: Հայաստանի բոլոր քաղաքները՝* ***Վան, Կարին, Բագավան, Վաղարշապատ, Արտաշատ****, բռնված էին պարսից զորքերով:*

Բացահայտչից հետո չի դրվում ստորակետ հետևյալ դեպքերում՝

Եթե բացահայտիչը դրված է սեռական հոլովով:

Տիգրան Մեծի՝ ***հայոց արքայի*** *զորքը երկար տարիներ անպարտ էր:*

Եթե բացահայտչին հաջորդում է կապ՝ *առաջ, համար, մասին, հետ,միջոցով* և այլն:
Ճամփորդի՝ ***ալեհեր կնոջ առաջ*** *բացել էին տան դռները:*

Եթե բացահայտչից հետո դրվում է եմ, ես, է օժանդակ բայը կամ հանգույցը:

Լուիզան՝ ***նրա աղջիկն էր*** *ամեն ինչ կազմակերպում:*

Եթե բացահայտչից հետո ընկնում է էլ շաղկապը:

*Անին՝ դասըն****կերուհիս էլ*** *որոշեց գալ մեզ հետ Արատես:*

Բացահայտիչները, իրենց հերթին, երբեմն կարող են ունենալ հետադաս որոշիչ լրացում:

Դա հանգուցյալի երկրորդ որդին էր՝ ***Միքայելը՝*** *քսանութ տարեկան մի երիտասարդ՝ նուրբ կազմվածքով, ածխի պես սև մազերով, նորաձև ընչացքով:*

Չպետք է շփոթել բացահայտիչը բազմակի անդամների հետ, մանավանդ այն դեպքում, երբ բազմակի անդամները կրկնվում են նույն բառով՝ արտահայտելով ոճական սաստկացում:

Եվ հանկարծ լսեց նա մի երգ, մի հիասչքանչ ու թախծոտ երգ ***(բազմակի անդամներ):***

Մասնական բացահայտիչ

Մասնական բացահայտիչը բացահայտյալին մասնակիորեն, միայն մի կողմը, մի հատկանիշը բացահայտող անդամն է: Ձևավորվում է որպես, իբրև կապերի միջոցով: Մասնական բացահայտիչը ունի ազատ շարադասություն և կարող է ընկնել բացահայտյալից առաջ և հետո:

Օրինակ՝ *Նրան բոլորն էին ճանաչում՝որպես անվանի ճարտարագետի:*

Որպես անվանի ճարտարագետի՝ նրան բոլորն էլ ճանաչում էին :

Մասնական բացահայտիչը հոլովով և թվով համաձայնում է բացահայտյալին:

1. Օրինակ՝*Որպես հայ զինվոր՝Էդգար Վարդանյանը հանրաճանաչ է դարձել՝ հերոսության շնորհիվ:*

Մասնական բացահայտիչը որոշիչ հոդ չի ստանում:

Մասնավորող պարագայական բացահայտիչ

Մասնավորող պարագայական բացահայտիչ կոնկրետացնում է տեղ, ժամանակ ցույց տվող բացահայտյալին՝ պարագաներին:

Տեղի՝ *Ես քեզ կսպասեմ Երևանում, Լենինի անվան հրապարակում, յոթ աղբյուրի մոտ:*

Ժամանակի՝ *Այս տարի, մայիսի մեկին, երեկոյան ժամը 9-ին, հրետանային համազարկերից ասես նորովի էր գեղեցկացել Երևանը:*

Մասնավորող բացահայտիչը բացահայտյալին երբեմն համաձայնում է, երբեմն՝ ոչ:

Օրինակ՝ *Երևանում՝ Աբովյան փողոցում, աշխատանքային եռուզեռ է:*

Մասնավորող պարագայական բացահայտիչը բացահայտյալից տրոհվում է բութով, իսկ նախադասության մնացած մասից՝ ստորակետով: Պարագայական բացահայտիչը ևս կարող է լինել բազմակի, կամ ինքը հաջորդ անդամի համար դառնում է բացահայտյալ:

Բացահայտչի, նրա տեսակների և կետադրության ուսուցման ընթացքում կարելի է հանձնարարել՝

Տրված տեքստից առանձին այունակներով դուրս գրել բուն,մասնակի և մասնավորող պարագայական բացահայտիչները:

Տրված տեքստում ավելացնել սեռական հոլովով դրված բացահայտիչ բացահայտյալ կապակցություն:

Ընդգծել պարագայական բացահայտիչները՝ նշելով տեսակը: Կետադրել:

Զորի երկու կողմում թավուտ անտառների մեջ արջեր շատ են լինում:

Պապս արթնանում է վաղ առավոտյան ուղիղ ժամը վեցին:

Երևանում Աբովյան փողոցում, աշխույժ եռուզեռ է:

Հարցական դերանունները փոխարինիր բուն բացահայտիչով:

Միքայելը՝ ո՞վ, երեկ մեր տանն էր:
Տանտիրուհուց՝ ումի՞ց, հեռագիր էր ստացել:
Տղան անհամբեր սպասում էր Սևուկի՝ ինչի՞ երևալուն:
Մայրը որդուց՝ ումի՞ց, արդեն երկար ժամանակ լուր չուներ:
Քուռկիկ Ջալալին արագ մոտեցավ տիրոջը՝ ո՞ւմ:
Հրազդանը՝ ի՞նչը, Երևանով է անցնում:

Գոյականական անդամի լրացումների ուսուցումը 8-րդ դասարանում

Որոշիչ,հատկացուցիչ ,բացահայտիչ

Ամփոփիչ դաս

Հայոց լեզվի դասաժամերը պետք է նպատակաուղղված լինեն ոչ միայն քերականական գիտելիքներ ստանալուն ,այլև ճիշտ խոսք կառուցելուն : Աշակերտները պետք է կարողանան խոսքը գեղեցիկ ու ճիշտ արտահայտել :

ՈՒստի պետք է տիրապետեն պատկերավորման միջոցների նշանակությանը և խոսքի մեջ ճիշտ գործածելու տեխնոլոգիաներին:

Դասի թեման – Գոյականական անդամի լրացումներ

Նպատակը.

1. Սովորողը պետք է կարողանա ինքնուրույն գտնել որոշիչը ,հատկացուցիչը,բացահայտիչը , հարցերի միջոցով խոսքի մեջ տարբերակել :
2. Զարգացնել բանավոր ու գրագետ խոսքը, ազատ ու անկաշկանդ հանդես գալ լսարանի առջև:
3. Հայրենասիրության դաստիարակում:

Խթանում – Դասը կարելի է սկսել **մտագրոհով** :



1.Որո՞նք են գոյականական անդամի լրացումները

2.Ի՞նչ են ցույց տալիս որոշիչը,հատկացուցիչը ,բացահայտիչը

3.Ի՞նչ հարցերի են պատասխանում

4.կապակցման եղանակները,շարադասությունը

Կարելի է կիրառել մտքերի գրանցման այսպիսի գծապատկեր.

Դիմելով դասարանին՝ վերհիշենք Ե. Չարենցի <<Ես իմ անուշ Հայաստանի >> բանաստեղծությունը (լավագույն ասմունքող),մյուսները գտնում են որոշիչները և հատկացուցիչները զուգահեռներ անցկացնելով պատկերավորման միջոցների միջև (մակդիր,համեմատություն, փոխաբերություն):
/10 րոպե/

Իմաստի ընկալում – Դասարանը բաժանել 3 խմբի ,կատարել քարտային աշխատանք

Նախադասությունը վերլուծել շարահյուսորեն.

Աշուն էր, զովաշունչ ու պայծառ մի աշուն,ինչպիսին սովորաբար լինում է Արարատյան դաշտում:

Նախադասությունը վերլուծել շարահյուսորեն.

Սենյակի օդը ծանր էր,գաղջ,և Փավստոսը կարգադրեց Հուսիկ սարկավագին բանալ լուսամուտի փեղկերը:

Նախադասությունը վերլուծել շարահյուսորեն.

Արամ Խաչատրյանը՝ հռչակավոր հայ երգահանը ,սիրում էր հանդես գալ նաև որպես նվագավար:

Կշռադատում և անդրադարձ - Դասը ավարտում ենք <<Պրիզմայով>> .10



Եզրակացություն

Հայոց լեզվի դասաժամերը պետք է նպատակաուղղված լինեն ոչ միայն քերականական գիտելիքներ ստանալուն ,այլև ճիշտ խոսք կառուցելուն : Աշակերտները պետք է կարողանան խոսքը գեղեցիկ ու ճիշտ արտահայտել :

Ուստի պետք է տիրապետեն պատկերավորման միջոցների նշանակությանը և խոսքի մեջ ճիշտ գործածելու տեխնոլոգիաներին:

Նման օրինակով կարելի է ուսուցանել ոչ միայն հայոց լեզվի դասերը, այլ գրականության, ինչու չէ նաև մյուս առարկաները:

Օգտագործված գրականության ցանկ

Ա.Աբրահամյան,ժամանակակից հայերենի քերականություն,Երևան,1975

Մ.Ասատրյան,Շարահյուսություն,Երևան,1987

https://grigorstepanyan.wordpress.com/2021/12/16/%D5%B0%D5%A1%D5%BF%D5%AF%D5%A1%D6%81%D5%B8%D6%82%D6%81%D5%AB%D5%B9/

https://hy.wikisource.org/wiki/%D4%B7%D5%BB:%D5%87%D5%A1%D6%80%D5%A1%D5%B0%D5%B5%D5%B8%D6%82%D5%BD%D5%B8%D6%82%D5%A9%D5%B5%D5%B8%D6%82%D5%B6,_%D5%95%D5%AA%D5%A1%D5%B6%D5%A4%D5%A1%D5%AF_%D5%B1%D5%A5%D5%BC%D5%B6%D5%A1%D6%80%D5%AF_%D5%B8%D6%82%D5%BD%D5%B8%D6%82%D6%81%D5%B9%D5%AB_%D5%B0%D5%A1%D5%B4%D5%A1%D6%80_(Syntax,_additional_manual_for_teachers).djvu/74

http://lib.ysu.am/disciplines_bk/d957b17fa5b273148b4148bd4faa9c70.pdf